

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ԱՆՁՆԱՆԻՇ ԴԱՐՁՎԱԾՈՒՄԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ
ԹՈՐՈՍՅԱՆ Հ. Վ.

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Երևան, Գր. Լուսավորիչ 15
e-mail:hripsimehtorosyan@yahoo.com

Հոդվածում քննարկվում են պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների տարբերակները, որոնք երկրադադրիչ, եռաբադադրիչ կամ բազմաբադադրիչ կապակցություններ են:

Պարսկերենի անձանիշ դարձվածքներն ունեն բառային, քերականական (ձևաբանական, շարահյուսական), քանակային տարբերակներ, ինչպես նաև հնչյունական և ուղղագրական տարբերակներ, որոնք պարսկերենի դարձվածաբանական համակարգին բնորոշ առանձնահատկություններից են: Այս տարբերակների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերել անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորների կառուցվածքային տեսակները և բացահայտել բառաքերականական առանձնահատկությունները:

Բանալի բառեր. անձանիշ դարձվածային միավորներ, դարձվածային տարբերակ, բառային տարբերակ, քերականական տարբերակ, քանակային տարբերակ, հնչյունական և ուղղագրական տարբերակներ

Ներկայացված է խմբագրություն 16. 03. 2018

Դարձվածաբանությունն ուսումնասիրում է կայունության տարբեր աստիճանի բառակապակցություններ և նախադասություններ, որոնք ունեն բառային մշտական կազմ, իմաստի ամբողջականություն և որպես բառային առանձին միավորներ վերարտադրելի են [1]:

Դարձվածքների իմաստային խմբերի մեջ առանձնանում են անձի հատկանիշ արտահայտող կապակցությունները՝ *անձանիշ դարձվածային միավորները* (ԱԴՄ), որոնք երկանդամ, եռանդամ կամ բազմանդամ կառույցներ են: Այս միավորների արտահայտության պլանում կան *կենդանի նշանակող բառեր* (առյուծի սիրտ ունենալ, ուղտի ականջում քնել), *թռչուն կամ սողուն նշանակող բառեր* (աղավնու պես անմեղ, օձի պես իմաստուն), *մարդու մարմնի անվանումներ* (լեղին ջուր կտրել, քար սիրտ, գլուխը բարձր), *գերագույն ոգու կամ աստվածության անվանումներ* (Աստծո պես՝ նման, Քրիստոսի պես՝ նման), *կրոնական, պատմական անձնավորության անվանումներ* (Ռոստամի նման, Մաջնունի նման, Հովսեփի եղբայրների նման [2]), *հատկանշային առարկաների անվանումներ* (մեղրի պես քաղցր, ծաղկի պես հոտավետ), *գունանուններ* (պատի պես ճերմակ, ածուխի պես սև, նուրբ հատիկի նման կարմիր) [3]:

Այս կարգի միավորներներն ունեն ձևաիմաստային տարբեր խմբեր, տարբերակներ, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ, որոնք տարբեր լեզուներում տարբեր դրսևորումներ ունեն: Այդ առումով ԱԴՄ-ների

տարբերակները որոշակի յուրահատկություն են դրսևորում պարսկերենում, ուստի անհրաժեշտություն է զգացվում անդրադառնալ այդ հարցին:

Պարսկերենի դարձվածքների բնորոշ առանձնահատկություններից մեկը բառային կազմի կայունությունն է: Բայց և այնպես շատ դարձվածային միավորներ, ինչպես նաև ԱԴՄ-ներն ունեն տարբերակներ, որոնք չեն խաթարում դարձվածքների կայունությունը [4]: Մասնագիտական գրականության մեջ *դարձվածային տարբերակները* դարձվածային կապակցության միակառույց կամ բազմակառույց միավորներ են, որոնք ունեն ընդհանուր բառային կազմ, պատկանում են նույն քերականական կարգին և զանազանվում են քերականական ձևերով ու բառերի շարադասությամբ. դրանց բառային կազմը կարող է մասամբ համընկնել [5]:

Լեզուներում սովորաբար առանձնացնում են ԱԴՄ-ների բառային, քերականական (ձևաբանական ու շարահյուսական) և քանակական տարբերակներ, մինչդեռ ժամանակակից պարսկերենում դրանցից բացի առկա են նաև ուղղագրական և հնչյունական տարբերակներ: Գ. Գոլևան դարձվածային միավորների տարբերակները՝ նախևառաջ դասակարգում է ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ համակառույց և տարակառույց: Համակառույց տարբերակները ներառում են բառային, ձևաբանական, հազվադեպ նաև հնչյունաբանական և ուղղագրական ձևերը: Տարակառույց տարբերակներին պատկանում են շարհյուսական կամ շարադասական ձևերը [6]: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

1. Բառային տարբերակներն առաջանում են բաղադրիչներից մեկի փոփոխման դեպքում: Դարձվածային միավորների փոփոխվող անդամները հիմնականում հոմանշային զույգ են կազմում: Օրինակ՝ *ātaš az češmaš parid (jost)* - آتش از چشمش پرید (جست) - աչքից կրակ թռավ,

ātaš afruxtān (rošan kardan) - آتش افروختن (روشن کردن) - իրավիճակը սրել (բոց. կրակ *վառել*),

dud az saraš boland šod (bar xāst) - دود از سرش بلند شد (بر خاست) - սիրտը կրակով այրվեց (բոց. գլխից ծուխ *բարձրացավ*),

češm az jahān (doniā) foru bastan - چشم از جهان (دنیا) فرو بستن - մահանալ (բոց. աչքը *աշխարհից* փակել),

mesl-e (hokm-e) barre - مثل(حکم) بره - *qumān* պես:

Այնուամենայնիվ բառային տարբերակներ կազմվում են նաև ոչ բուն հոմանշային զույգերից: Օրինակ՝ *āb zir-e pusteš raft (david)* آب زیر- پوستش رفت (دوید) ուժ հավաքեց, գործերը հաջողեցին (բոց. ջուրը մաշկի տակ *գնաց/վազեց*),

az āb roḡān (kare) gereftan - از آب روغن (کره) گرفتن - ամեն ինչից օգուտ քաղել (բոց. ջրից *յուղ/կարագ* քամել),

abḡure gereftan (čālāndan) - آبغوره گرفتن (چالاندن) - ոչ լիաթոք լաց լինել (բոց. խակ խաղողից հյութ *վերցնել/քամել*),

gereh bar abru zadan (andāxtan) - گره بر ابرو زدند (انداختن) - կատաղել, բարկանալ (բոց. հոնքերին կնճիռ *խփել/զգել*),

āberu-ye xod ra rixtan (bordan) - آبروی خود را ریختن (بردن) - իրեն պատվազրկել (բոց. պատիվը *թափել/տանել*),

Երբեմն հանդիպում է նաև բաղադրիչների միաժամանակյա փոփոխություն: Օրինակ՝ *āb az lab o luče-aš (dahānaš) sarāzir šod (rixt)* آب از لب - و لوجه اش (دهانش) سرآزیر شد

ապշած է, հիացած է (բոց. ջուրը *բերանից/շրթունքից* *գնաց/թափվեց*),

pā (qadam) az xat-e (marz-e) čizi birun (xārej) nahādan (gozāštan) پا (قدم) از خط (قادم) از خط

(مرز) (چیزى بیرون (خارج) نهادن (گذاشتن)
սահմանից/զծից դուրս հանել/դնել)

2. Քանակային տարբերակները միմյանցից զանազանվում են բաղադրիչների քանակային կազմով, որոնք երբեմն կարող են զեղչվել: Օրինակ՝ āftāb-e [omr-e] u zard šode - آفتاب [عمر] او زرد شده - կյանքի արևը ավարտին մոտենալ (բոց. նրա [կյանքի] արևը դեղին է դարձել),

bar [sar-e] ān budan - بر [سر] آن بودن - վճռականություն ունենալ, հակված լինել, mahal-e sag [ham] nagozāšt - محل سگ [هم] نگذاشت - շան տեղ [ել] չդնել,

[mesl-e] nardbān-e dozdhā - [مثل] نردبان دزد ها - շատ բարձրահասակ մարդ (բոց. գողի աստիճան(h) [պետ]),

[bar] sar-e kasi havār šodan - [بر] سر کسی هوار شدن - մեկի համար բեռ դառնալ (բոց. մեկի գլխին բեռ դառնալ),

be na'l o [be] mix zadan - به نعل و [به] میخ زدن - երկակի խոսել, հստակ չարտահայտվել (բոց. պայտին ու մեխին խփել):

Նշված օրինակները ցույց են տալիս, որ տարբերակների բաղադրիչները սղվում են նախադաս, միջադաս դիրքերում:

Դարձվածային միավորների քանակային տարբերակների առանձին տիպ կարելի է համարել բանաստեղծական դարձվածքների երկրորդ տողերի՝ միսրանների զեղչումը, ինչպես՝

Āb dar kuze va mā tešne labān mi gardim [Yār dar xāne va mā gerd-e jahān mi gardim]

آب در کوزه و ما تشنه لبان می گردیم [یار در خانه و ما گرد جهان می گردیم]

Ջուրը կժի մեջ է, իսկ մենք ծարավից տանջվում ենք

[Ընկերը տանը, իսկ մենք աշխարհի շուրջն ենք պտտվում]:

3. Քերականական տարբերակները բաժանվում են ձևաբանական և շարահյուսական տեսակների:

Ա. Ձևաբանական տարբերակներն առաջանում են կառույցների անդամների ձևաբանական հատկանիշների հիման վրա: Այս տարբերակները ձևավորվում են բաղադրիչների եզակի–հոգնակի ձևերով, հոդի, նախդիրների, հետադրությունների առկայությամբ և բացակայությամբ, տարբեր կցական դերանունների կիրառությամբ: Օրինակ՝ *be (bar) bād dādan* - به (بر) باد دادن - քամուն տալ,

ābemān dar (tuye) yek juy nemi ravad - آبهان در (توی) یک جوی نمی رود - մեր ջուրը մի առվով չի հոսում,

češmaš (češmam) čahār tā šavad - چشمش(چشم) چهار تا شود - պետք է ավելի ուշադիր լինել (բոց. աչքը/աչքս չորս դառնալ),

bāj (bāji) be ham nahādan - باج (باجی) به هم نهادن - իրար չզիջել, իրար հավասար լինել (բոց. իրար հարկ չվճարել),

del-e xoš (xoši) nadāstan az kasi - دل خوش (خوشی) نداشتن از کسی - մեկին չսիրել

nāxon (nāxonhā) tiz kardan barāye čizi - ناخن (ناخن ها) تیز کردن برای چیزی - եղունգը / եղունգները սրել:

Բ. Շարահյուսական տարբերակները պատկանում են տարակազմ դարձվածային միավորներին և ձևավորվում են շարահյուսական տարբեր հարաբերությունների արտահայտման հետևանքով: Օրինակ՝

az in dar be ān dar zadan // [be] in dar va ān dar zadan

از این در با آن در زدن // [به] این در و آن در زدن

բոլոր դռները թակել, դռնեդուռ ընկնել,

xomayeze-ye čizi rā kešidan // dar xomayeze-ye čizi budan

خمیازه چیزی را کشیدن // در خمیازه چیزی بودن

ձգտել ինչ–որ բանի (բոց. հորանջել):

4. **Հնչյունական տարբերակները բնորոշ են պարսկերենին:** Պարսկերենի դարձվածային միավորների կազմում որոշ բաղադրիչներ կարող են ունենալ արտասանական տարբերակներ, որոնք արտահայտվում են գրության մեջ: Օրինակ՝ *pā* (*pāy*) rā dar kafš-e kasi kardan - *پا (پای) را در کفش کسی کردن* - խառնվել մեկի գործերին (ոտքը մեկի կոշիկի մեջ դնել),

mu (muy) rā az māst mi kešad - *مو (موی) را از ماست می کشد* - գործը մանրամասն կատարել (բոց. մածունից մազ քաշել),

yaxe-ye (yaqe) kasi rā gereftan - *بخه (بخه) کسی را گرفت* - ձանձրացնել, կաշել մեկին (բոց. մեկի օձիքը բռնել):

5. **Ուղղագրական տարբերակները** հանդիպում են պարսկերենի այն դարձվածքներում, որոնց բաղադրիչները երբեմն ունենում են նույն արտասանությունը, սակայն ուղղագրությամբ տարբերվում են: Օրինակ՝ *harf-e sad tā yek ġāz (qāz)* - *حرف صد تا یک غاز (غاز)* - հատարկախոս (բոց. հարյուր բառը՝ մի գրոշ):

Պարսկերենում, ոչ հազվադեպ, հանդիպում են այսպես կոչված **համակցված տարբերակներ**, երբ ԱԴՄ-ների բառային, քանակական, ձևաբանական և մյուս կարգի տարբերակները հանդես են գալիս համատեղ: Օրինակ՝ *āb-e bāriki [dar (be) juy]* dāštan - *آب باریکی [در (به) جوی] داشت* - ապհովված, անհոգ լինել (բոց. մի քիչ ջուր ունենալ (առվում))

pā dar havā [soxan] goftan (harf zadan) - *پا در هوا [سخن] گفتن (حرف زدن)* - անհեթեթություն դուրս տալ, դատարկաբանել (բոց. ոտքը օդում խոսել):

Այսպիսով, ԱԴՄ-ների տարբերակները պարսկերենում ունեն որոշ կառուցասիւղեր՝ իրենց բնորոշ իմաստային առանձնահատկություններով:

ա) **Բառային** տարբերակներում հիմնականում փոխվում են հոմանիշ բայական բաղադրիչները. հազվադեպ տարբերակներ են կազմում ոչ հոմանիշ բաղադրիչները, որոնք իմաստային մերձավորություն են դրսևորում շարահյուսական տվյալ միջավայրում:

բ) **Քանակային** տարբերակները ձևավորվում են կառույցի էլիպսիսի՝ բաղադրիչներից մեկի զեղչման հետևանքով: Երբեմն զեղչվում են նաև բանաստեղծական դարձվածքների երկրորդ տողերը:

գ) **Քերականական** տարբերակները բնութագրվում են կառույցի բաղադրիչների ձևաբանաշարահյուսական հատկանիշներով: Ձևաբանական տարբերակները ձևավորվում են բաղադրիչների եզակի–հոգնակի ձևերով, հոդի, նախդիրների, հետադրությունների առկայությամբ և բացակայությամբ, շարահյուսական տարբերակների ձևավորման հիմքում ընկած է իմաստաբանական գործոնը:

դ) **Հնչյունական** տարբերակների ձևավորման գործոն կարող են դառնալ դարձվածքների որոշ բաղադրիչների արտասանական տարբերակները:

ե) **Ուղղագրական** տարբերակները բնութագրվում են դարձվածքների բաղադրիչների արտասանական նույնությամբ և ուղղագրության տարբերությամբ:

Անձնանիշ դարձվածքների տարբերակները պարսկերենում պատկերավոր համեմատությունների յուրահատուկ համակարգ են կազմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинчик, Ю. А., Основы фразеологии персидского языка, Москва, 1981, с. 7.
2. Пейсиков, Л. С., Лексикология современного персидского языка, Москва, 1975, с. 190.
3. Խաչատրյան, Լ. Մ., Ավետիսյան, Լ. Ն., Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (5-16-րդ դդ), Երևան, 2015, էջ 24-27:
4. Веретенников, А. А., Очерки глагольной фразеологии, Москва, 1993, с. 61.
5. А. В. Кунин, Англо-русский фразеологический словарь, 4 изд., Москва, 1984, с. 9:
6. Голева, Г. С., Фразеология современного персидского языка, Москва, 2006, с. 56:

РЕЗЮМЕ

ВАРИАНТЫ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ СОЧЕТАНИЙ СО ЗНАЧЕНИЕМ ПРИЗНАКА ЛИЧНОСТИ В ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ ТОРОСЯН Р. В.

В статье обсуждены варианты фразеологических сочетаний со значением признака личности в персидском языке. Эти варианты – двухкомпонентные, трехкомпонентные или многокомпонентные сочетания.

Рассмотрены лексические, грамматические (морфологический, синтаксический), квантитативные варианты фразеологических сочетаний со значением признака личности, а также фонетические и орфографические варианты, которые являются особенностью персидского фразеологизма. Выявлены структурные виды и лексико-грамматические особенности фразеологических сочетаний со значением признака личности.

SUMMARY

THE VARIANTS OF PHRASEOLOGICAL UNITS DENOTING A HUMAN'S APPEARANCE IN FARSI TOROSYAN H. V.

The article discusses the variants of phraseological units denoting a human's appearance in farsi. These units are double-component, triple-component or multi-component combinations.

The article analyzes lexical, grammatical (morphological, syntax), quantative variants of phraseological units denoting a human's appearance and also phonetic and orthographic variants which are the particularity of persain phraseology.

The article shows the structure types and lexical-grammatical features of units denoting a human's appearance.